

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2017-1-1-Ա

ք. Երևան

22.02.2017թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2017 թվականի փետրվարի 22-ի նիստում քննարկեց 2017 թվականի հունվարի 24-ին արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ Alexander Schärf & Söhne Gesellschaft m.b.H. (Dr. Alexander Schärf Platz 1 A-7100 Neusiedl am See, AT) ընկերության բողոքը «the italian» (IR1263743) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի եւ ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու եւ քննարկելու» կարգի 90-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների եւ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում հայտարկված «THE ITALIAN» ապրանքային նշանը, որն անգլերենից թարգմանաբար նշանակում է «իտալացի, իտալական» չի կարող գրանցվել ավստրիական ընկերության անունով, քանի որ այն ուղղակիորեն մատնանշում է, որ ապրանքները արտադրված են Իտալիայում, ինչն էլ միջին սպառողին մոլորության մեջ կգցի, որ ապրանքներն արտադրված են իտալական ընկերության կողմից:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն

Ավստրիական ընկերության կողմից «իտալական» բառային տարր պարունակող ապրանքային նշանը միջին սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների ծագման վերաբերյալ, հետևաբար ներկայացված ապրանքային նշանը գրանցման ենթակա է:

Բողոքարկողը պնդեց իր տեսակետը, որ ներկայացված ապրանքային նշանը կարելի է գրանցել:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ որոշումն իրավաչափ է և ներկայացված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ «the italian» (IR1263743) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ